

Einleitung des Verfassers





ՇԻՐԱԿ

Պատմական Հայաստանի Շիրակի դաշտավայրից շորրորդ հատորում զետեղված են Ալեքսանդրապոլի (Լենինական) ու նրա շրջակայքի դյուզերի հեքիաթները, որոնք տարբեր ժամանակներում հավաքել են Երվանդ Լալայանը, Տիգրան Նավասարդյանը, Աղ. Մխիթարյանն ու Աղեքսանդր Ափրիկյանը, Հ. Տեր-Վարդանյանն ու Վարդ Բդոյանը:

Այս բաժնի գերակշռող մասը անտիպ նյութեր են, որոնք պահպանվում են Հայկական ՍՍԻ Գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում:

ԲԱՍԵՆ

Ներկա հատորի երկրորդ բաժինը կազմում է պատմական Հայաստանի Բասենի գավառի ժողովրդական հեքիաթները, որոնք բացառապես անտիպ են և զբոսնում են նույնպես Բանահյուսական արխիվում:

Այս բաժնի նյութերը բովանդակում են Բասենի գավառի իսար, Հարսենքար, Երասխաձոր գյուղերի ու Նարման-էքրեկի խոսվածքներով ժողովրդական հեքիաթները, որոնք գրի են առել բանահավաքներ՝ Ա. Թովմասյանը, Երվանդ Պեղազյանը, Արտաշես Բարսեղյանը, Սենեքերիմ Շալճյանը: Վերոհիշյալ բանահավաքների գրի առած հեքիաթները մտնում են Երվանդ Լալայանի խմբարշավի նյութերի մեջ:

ՋԱՎԱԽՔ

Սույն հատորի երրորդ բաժինը կազմում է Կաթինի (էրզրում) և Ջավախքի (Ախալցխա, Ախալքալաք) հեքիաթները: Սրանցից շորսը տպագրված են Երվանդ Լալայանի հավաքած ու հրատարակած՝ «Պատմաշունչ գրքույկում (Ալեքսանդրապոլ, 1911) մեկը՝ «Միսոռ տպագրված է «Ազգագրական հանդեսի» 19-րդ գրքում, և երեքը անտիպ (Ե. Լալայանի ֆոնդ)։

Երվանդ Լալայանը համապատասխան տեղեկություններ է տալիս իր հավաքած հեքիաթների գրառման հանգամանքների և ասացողների մասին:

Մանոթագրությունների մեջ աշխատել ենք, որքան հնարավոր է, տեղեկություններ հաղորդել՝

1. Հատորում զետեղված հեթաթենների համար հիմք ծառայած աղբյուրների մասին:

2. Գրառման հանգամանքների և ասացողների մասին բանահավաքների հաղորդած բոլոր տեղեկությունները:

3. Տվյալ հեթաթի սյուժեի առնչությունը նախորդ հատորների և սույն հատորի տարբեր հեթաթենների սյուժեների հետ:

4. Համառոտության համար Մանոթագրությունների մեջ ձեռնյալ ազգագրական ժողովածուն՝ անվանում ենք էԱԺ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվը՝ Բանահյուսական արխիվ:

Շ Ի Ր Ա Կ

1. ՀԱՅՐԱՄԱՆԻ

(էջ 15)

Տպագրվում է ըստ ձեռնյալ ազգագրական ժողովածուի՝ Ա հատորում (էջ 22—25) հրատարակված տեքստի:

Այս հեթաթը գրի է առել այնքանորապույցի բանահավաք Աղեքսանդր Ափրիկյանը և դեռևս 1880 թ. ուղարկել Գր. հալաթյանցին: Վերջինս էլ 1901 թ., երբ պատրաստվում էր ձեռնյալ ազգագրական ժողովածուի՝ Ա հատորում հրատարակել Աղ. Մխիթարյանցի՝ Փշրանքներ Շիրակի ամբարներից՝ բանահյուսական նյութերի հավաքածուն, այդ նյութերի մեջ զետեղում է նաև Աղ. Ափրիկյանի հավաքած հեթաթենը (տե՛ս սույն հատորի Մ 1, 2, 4, 13 հեթաթենները): ձեռնյալ ազգագրական ժողովածուի՝ Ա հատորում (Մոսկվա—Վաղարշապատ, 1901) պրոֆ. Գր. հալաթյանցը համարագրության կողմից առաջարկում հանգամանորեն լուսարանում է Աղ. Մխիթարյանցի Փշրանքներ Շիրակի ամբարներից՝ բանահյուսական հավաքածուի արժեքն ու նշանակությունը: Բերում ենք համարագրության կողմից այդ առաջարկն ամբողջությամբ:

Ներկա հավաքածուն լույս է տեսնում ինչպես ձեռնյալ ազգագրական ժողովածուի՝ առաջին հատոր՝ համաձայն Բարձրագույն հաստատված ձեռնյալ Դրամագլխի՝ կանոնադրության 7-րդ հոդվածի:՝ Նա բովանդակում է ազգագրական նյութեր Ալեքսանդրապոլ գավառի կամ՝ հին առամբ, Շիրակի ժողովրդի կյանքից, որոնց ինքը հավաքողը Փշրանքներ Շիրակի ամբարներից՝ համեստ կոչումն է տալիս: Նյութերը բաժանված են երկու մասի. 1) Ժողովրդական բանավոր գրականության տեսակները և 2) Նկարագիր-Հավատք, ընտանեկան բարք ու սովորույթ, կենցաղ և զբաղմունք: Ժողովածուի վերջում գրված է և նույն գավառաբարառի չի համառոտ բառարան:

՝ ձեռնյալ Դրամագլխի՝ գործադիր թմանձնաժողովը կարող է հարկավոր համարված դեպքում գումար հատկացնել ձեռագիր ժողովածուների տպագրության՝ նախապես դոցա քննելուց և՝ իր հավանությունը տալուց, բուն տպագրության գործը հանձնելով դոցա աշխատասիրողներին:

Խմբագրությանս գործը այս դեպքում եղել է՝ ընտրություն անել հավաքողի ներկայացրած բազմաթիվ նյութերից և ընտրածը դասավորել դիտական սխեմայով, ուստի դրության ոճը նկարագրությունների մեջ, որ գուցե ոչ միշտ ցանկալի ճկունություն ունի, մենք անփոփոխ ենք թողել՝ ժողովածուիս զլխավոր արժեքը առաջ վերապես յուր ներկայացրած հում նյութերի մեջ տեսնելով:

Ըստ ինքյան հասկանալի է, թե կարելի չէ բոլորովին նոր համարել, ինչ որ բովանդակում է ներկա հատորը (ինչպես և առհասարակ ամեն մի ազգագրական ժողովածու), յուր ամեն մասերում. նորա մեջ գուցե կը գտնվին այնպիսի բաներ, որոնք այլ և այլ ժամանակ հաղորդված են եղել մեր թերթերի կամ առանձին գրք-ընկերների մեջ՝ նույն կամ նման ձևերով, այս կամ այն գավառի նկարագրության առթիվ: Բայց նաև այս կրկնությունը՝ որոշ սխեմայի հետ միասին, յուր անհերքելի արժեքն ունի՝ վերատուգելով և հաստատելով նախընթաց հաղորդածները և հայ ազգագրության համեմատական ուսումնասիրության համար ավելի առատ և ապահով նյութ պատրաստելով: Անտարակույս է սակայն, որ սա առաջին փորձն է Ալեքսանդրապոլ գավառի ուսումնասիրության և՛ իբրև այդպիսի, նա արժանի է մեր ազգագրագետների ուշադրության:

Մասնավորապես պետք է շեշտել հեքիաթները՝ բոլորն էլ հին՝ դուրացարանական կամ հրաշալի բովանդակությամբ, որոնք ոչ պակաս հետաքրքրություն ունին և ընդհանուր հեքիաթային գրկանության տեսակետից:

Փաղցր պարտականություն եմ համարում հիշել այստեղ, որ դոցանից շորսը՝ «Հաբրմանի», «Մարդակերպ ձուկը», «Ավճի Շարուրի տղեն» և «Թագավորի պզդի տղեն» (երես 22—73) դեռ 1880 թվին էին գրի առնված և ուղարկված մեզ մեր խնդրանքով մեր մանկության ընկեր և վաղաժամ վախճանված վերջին խոհերայի տարին, բնիկ Ալեքսանդրապոլցի Ալեքսանդր Ափրիկյանից՝ մի համառոտ առաջաբանով, որ այսօր էլ դեռ չի կորցրել յուր հետաքրքրությունը: Եվ որովհետև, դոքա գրի էին առնված նույն Ալեքսանդրապոլի ժողովրդի բերանից, ուստի մենք օգտվելով ներկա դեպքից, հարմար համարեցինք ամբողջության համար կցել նրանց Պ. Ալեքսանդր Մխիթարյանցի հավաքածուին, որ նույն գավառին է նվիրված: Հետագային ընթերցողը կդիտե անշուշտ, թե որքան ուղիղ է ըմբռնել հանգուցյալ բանահավաքը ժողովրդական գրականության գրի առնելու ղեկարհն գործը և որքան ճիշտ, թույլ կտամ ինձ ասել՝ նաև գեղարվեստորեն կարողացել է վերատեղծել մեր առաջ ժողովրդի բուն պատմածը:

Գնահատելի են մանավանդ առածները (1500 հատ), օրհնանքների (280), անեծքների (156) և երգումների (150) հավաքումները՝ այբբենական կարգով դասավորված: Պակաս ուշագրավ չեն և հավատքի, կենցաղի ու զբաղմունքի բաժինները:

Վերջապես ժողովրդական բանավոր գրականության գրականական հետաքրքրությունից զատ նկատելի է նաև նորա լեզվաբանական նշանակությունը, գավառաբարբառների ուսումնասիրության տեսակետից, որի համար նյութերի վերջում տեղավորված համառոտ բառարանը որոշ ծառայություն կարող է մատուցել մասնագետին:

«Խմբագրության կողմից»-ի տողատակում Գր. Խալաթյանցը բերում է Ալեքսանդր Ափրիկյանի առաջաբանը հեքիաթների մասին: Նույնությամբ բերում ենք այստեղ նաև այդ առաջաբանը: «Ահա ուղարկում եմ ձեզ մի ծրար, որը պարունակում է յուր մեջ մի գրվածք շորս հեքիաթների՝ «Հաբրմանի», «Մարդակերպ ձուկը»,

«Ավճի Շարուրի տղեն» և «Քազավորի պզդի տղեն», ընդամենը բաղկացած 53 հրեաներից: Այն ամեն թերութիւնները, որոնք վերաբերում են առհասարակ գրականական կանոններին, հանձնում եմ ձեր քննադատութեանը և ուղղելուն, իսկ ինչ որ կվերաբերի այս հեքիաթների ժողովրդական ոճին և բարբառին, ես աշխատել եմ որքան հնարավոր է հնու մնալ գրականութեան ամենայն մի արհեստականութիւնից, թողնելով նրանց անփոփոխ իրենց պատմական օրիգինալ ձևի մեջ: Բայց ժողովրդական բարբառ ասելով մենք չպետք է հասկանանք մի որոշ լեզու, որով ժողովուրդը պատմում է յուր ավանդական հեքիաթները, այլ մի լեզու, որ ներկայագոյնում է մեր առաջ մի բազմատեսակ խառնիճաղանջ բարբառների քառու: Մի այսպիսի հզօրակցութիւն վստահութեամբ կարելի է անել մանավանդ մեր Շիրակ գավառի ժողովրդական լեզվի վերաբերութեամբ, ուր ազգաբնակչութիւնը կազմակերպված լինելով զանազան երկրների գաղթական ժողովուրդներից, յուրաքանչյուր գաղթական տարրը դեռ մինչև այսօր պահպանել է այստեղ յուր բարբառի որոշ ձևերն ու դարձվածքները՝ յուր տարօրինակ ոճերով ու բառերով: Պարզ բան է ուրեմն, որ մեզանում ժողովրդական հեքիաթներ գրի անցնել ցանկացողը չէր կարող արձանագրել սրանց միայն մի որոշ բարբառով, այլ տարբեր բարբառներով: Մասնավորելով խոսքս այս կետի վերաբերութեամբ այսքանը միայն կասեմ, որ մեզանում յուրաքանչյուր հեքիաթ ասողը համարյա ունի յուր խոսակցութեան առանձին ոճերն ու վերջավորութիւնները:

Մի որևէից լեզվի բազմաբարբառ լինելը, որը ծնունդ է առնում և զարգանում զանազան աշխարհագրական և պատմական պատճառներից, թեև մի կերպ նպաստում է նույն իսկ լեզվի հարստանալուն, շնորհելով այդ լեզվին միևնույն միտքը և իմաստը բացատրող տարբեր ոճեր, տեսակ-տեսակ դարձվածքներ. միևնույն նշանակութիւնը կամ ստուգաբանութիւնը ունեցող տարբեր բառեր, բայց մյուս կողմից ի՞նչ է այն ազգութիւնը, որ լուսնի մի որոշ ժողովրդական լեզու, այլ գավառակա տարբեր բարբառներ միայն: Այսպիսի ազգութիւնը չէ մի ձուլը զանգված, այլ մի շարդ ու փշուր եղած զանգվածի բեկորներ, ինչպես մենք հայերս: Հարուստ ենք մենք, այո՛, որ ունինք մի բազմաբարբառ լեզու, բայց աղքատ ենք, որ չունենք մի ժողովրդական լեզու, մի ընդհանուր գրականական լեզու:

Ամենից ավելի անտանելի են օտար՝ պարսկական կամ տաճկական բառերը, որոնք մուտք են գործել և նրանցից շատերը պատշաճավոր տեղ են բռնել արդէն մեր լեզվի մեջ: Դարերով է ընդունվել այս անմաքրութեան էլեմենտը մեր լեզվի մեջ և դարերով գուցե դուրս գա նրա միշից: Արտաքսել, դուրս քշել այժմ միանգամայն օտար բառերը մեր ժողովրդական հեքիաթների միշից, նշանակում է բոլորովին քամել նրանցից ժողովրդական ոգին, շնչել նրանց վրայից ժողովրդական տիպարը: Եվ այս հանգամանքը այնքան ուժ ունի, որ հարկադրում է հեքիաթներ գրի անցնողին լինել սառնարյուն և համբերութեամբ դասավորել օտար բառերն էլ մայրենի բառերի շարքում: Ես էլ հաշտվեցի այս անհրաժեշտութեան հետ, ազնիվ ընկեր, և դրա համար իմ գրած հեքիաթներս էլ բավականին հարուստ են օտար բառերով:

(Մ. Խ. հանգուցյալը ազատ միջոցներում զբաղվում էր գրականութեամբ և ի միջի այլոց երկար տարիներ աշխատակցում էր «Մշակ» լրագրին «Շիրակացի» և այլ կեղծ անունների տակ):

«Հարմանի» հեքիաթը իր բովանդակութեամբ ու սյուժետային զարգացմամբ հիշեցնում է սույն հատորի «Միրզա-Մահմուտի հեքիաթը» (Ձ 23):

2. ԱՎՃԻ ՇԱՐՈՒՐԻ ՏՂԵՆ

(էջ 27)

Տպագրվում է համաձայն *եէմիյան ազգագրական ժողովածուի* Ա հատորում (էջ 50—88) լույս տեսած տեքստի:

Գրառման հանգամանքների մասին տե՛ս նախորդ՝ Ն¹ ծանոթագրությունը:

Այս հեքիաթը թեմայով և սյուժետային գծերով հիշեցնում է «Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության նախորդ հատորի հեքիաթները:

3. ՂԸՌ-ԱԹ

(էջ 46)

Տպագրվում է առաջին անգամ, հրառման ձեռագիրը պահպանվում է Բանաստեղծական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, Ն 860): Հեքիաթը գրի է առել ինքը՝ Երվանդ Լալայանը: Հեքիաթի մասին էջատակին Լալայանը գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտ. 30-ին Ալեքսանդրապոլում Հայ-Ղուլի-Դուսկյանտ գյուղի (Ալեքսանդրապոլի գավառ) բնակիչ Սարգիս Միքայելյանը, 27 տարեկան երիտասարդը, որը 15 տարիներին չէր ապրում է Ալեքսանդրապոլում: Պարապել է խոհարարությամբ, գյուղում փոքր ինչ կարդացել է: Շնորհիվ յուր լավ ձայնի, այժմ տիրացիություն է անում»:

«Ղըռ-Աթ» հեքիաթը հիշեցնում է սույն հատորի «Նախընտրված» ղշի հեքիաթին» («Ն 16»), ղշերի թագավորին բռնելու միջոցների նմանությամբ:

Այս հեքիաթը մասամբ էլ առնչվում է ներկա հրատարակության առաջին հատորում գեղեցկած՝ «Ղուլ-փարին» (Ն 2) հեքիաթի հետ:

4. ՄԱՐԴԱԿԵՐՊ ՁՈՒԿԸ

(էջ 61)

Տպագրվում է ըստ էԱԺ I հատորում (էջ 35—50) հրատարակված տեքստի: Գրառման հանգամանքների մասին տե՛ս Ն¹ ծանոթագրությունը:

5. ԶԱՆԳԻ-ԶՐԱՆԳԻ

(էջ 78)

Տպագրվում է առաջին անգամ, ձեռագիրը պահպանվում է Բանաստեղծական արխիվում (Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, Ն 858):

Ձեռագրի վրա գրված է՝ «Երվանդ Լալայանի խմբարշավ», Ալեքսանդրապոլ: գրի է առել ինքը՝ Երվանդ Լալայանը, որը էջատակում գրում է. «Պատմեց 1915 թվ. նոյեմբերի 7-ին Ալեքսանդրապոլում Սարգիս Միքայելյանը: Սրանից հետո գրված է. «Գրի առավ Երվանդ Լալայանը: Ասացողի մասին մանրամասն տեղեկություններ տե՛ս Ն 3 հեքիաթի ծանոթագրության մեջ»:

6. ԹԱՓԱ-ԳՅՈՋԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 87)

Տպագրվում է առաջին անգամ, Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանաստեղծական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, Ն 861):

Ձեռագրի վրա գրված է՝ «Երվանդ Լալայանի խմբարշավ», Ալեքսանդրապոլ: էջատակին գրված է. «Գրի առավ Երվանդ Լալայանը: Նույն տեղում Լալայանը

գրում է. «Պատմեց 1915 թ. նոյեմբերի 8-ին Աղեքսանդրապոլում, միևնույն Սարգիս Միքայելյանը, Ասացողի մասին մանրամասն տեղեկություններ տե՛ս Պ 3 հեթիաթի ծանոթագրության մեջ»

7. ԶԱՐԶԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԻ ԱՂՋԻԿԸ

(էջ 94)

Տպագրվում է առաջին անգամ, Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Համբարձում Տեր-Վարդանյանի ֆոնդ, 68, Պ 2)։

Զեռագրի վրա դրված է. «Գրի առավ Շիրակի Մահմուդջուղ գյուղացի Համբարձում Տեր-Վարդանյանը, 13 փետրվարի, 1940 թ.՝ Ասացողի մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում»։

8. ՄԱՋՐՈՒՄ ԽՈՋԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 105)

Տպագրվում է առաջին անգամ, Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդյանի ֆոնդ, գործ 3, Պ 13)։ Զեռագրում հեթիաթի գրառման հանգամանքների մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդվում։

Այս հեթիաթը իր թեմայով, սյուժետային դարդացմամբ, ինչպես նաև առանձին շատ գծերով հիշեցնում է սույն հատորի մեջ եղած՝ «Դամրոճու հեթիաթը» (Պ 9), «Ժուշկին գեներալ» (հավելված I, Պ 1), «Քյալ-Օղլան» (Պ 33), «Միսոն» (Պ 53) հեթիաթները։

9. ԴԱՄԸՐՃՈՒ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 118)

Տպագրվում է առաջին անգամ, Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ I, Պ. 863)։ Զեռագիրը մտնում է Երվանդ Լալայանի խմբարշավի նյութերի մեջ, Գրի է առել ինքը՝ Ե. Լալայանը Աղեքսանդրապոլում, էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտ. 7-ին Աղեքսանդրապոլում Սարգիս Միքայելյանը, Ասացողի մասին կենսագրական տեղեկություններ տե՛ս Պ 3 հեթիաթի ծանոթագրության մեջ»։

Այս հեթիաթը սյուժետային գծերով առնչվում է սույն հատորի մեջ տեղ գտած «Մաշրում Խոջի հեթիաթը» (Պ 8) և «Միսոն» (Պ 53) հեթիաթների հետ։

10. ՌԱՆԶՊԱՐԻ ՏՂԵՆ

(էջ 126)

Տպագրվում է ըստ էԱԺ I հատորում (էջ 1—15) հրատարակված տեքստի, Գրի է առել Աղ. Մխիթարյանցը, ղեկավարելով իր «Փշրանքներ Շիրակի ամբարներից» խորագիրը կրող բաժնում։ Այս հեթիաթի հետ է, որ Գր. Խալաթյանցը տեղավորել է Աղ. Ափրիկյանի գրի առած այն շորս հեթիաթները, որոնց մասին հիշատակել ենք Պ 1 ծանոթագրության մեջ։

«Ռանչպարի տղեն» հեթիաթը առնչվում է սույն հատորի մեջ տեղ գտած «Թ. Ե. գավորի երեք տղաները» հեթիաթի հետ (Պ 15)։

Հեքիաթը Թարգմանարար Հրատարակվել է *„Армянские сказки-фольклоризмы“*, II изд., 1933, Москва—Ленинград, стр. 129-142. Перевод и примечания Я. Хачатрянца, введение М. Шагинян, рисунки, форзац, переплет и суперобложки М. Сарьяна.

11. ԻՄԱՍՏՈՒՆ ՔՈՒՌԱԳԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 139)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանաստեղծական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդյանի ֆոնդ, գործ III, Մ 13): Գրառման հանգամանքների մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդվում:

12. ՂՈՒԼ-ՋԱԴԱ ԵՎ ՆՈՒՌԻ-ԳՅՈՋԱԼԻ

(էջ 149)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանաստեղծական արխիվում (տե՛ս Երվանդ լալայանի ֆոնդ, գործ I, Մ 862): Այս ձեռագիրը ևս մտնում է Երվանդ լալայանի խմբարշավի նյութերի մեջ: Գրի է առել Երվանդ լալայանը Ալեքսանդրապոլում: Էջատակին նշում է. «Պատմեց 1915 թ. նոյեմբերի 9-ին Ալեքսանդրապոլում նույն Սարգիս Միքայելյանը: Ասացողի մասին կենսագրական տեղեկություններ տե՛ս Մ 3 հեքիաթի ծանոթագրության մեջ:

13. ԹԱԳԱՎՈՐԻ ՊՋՏԻ ՏՂԵՆ

(էջ 153)

Տպագրվում է ըստ էԱԺ I հատորում (էջ 68) լույս տեսած տեքստի: Այս հեքիաթի գրառման հանգամանքների մասին տե՛ս Մ 1 հեքիաթի ծանոթագրությունը:

14. ԲԱՂԴԱՎՈՐ ՏՂԱ

(էջ 158)

Տպագրվում է ըստ էԱԺ I հատորում (էջ 15—22) հրատարակված տեքստի: Մանրամասնությունները տե՛ս Մ 10 հեքիաթի ծանոթագրության մեջ:

15. ԹԱԳԱՎՈՐԻ ԵՐԵՔ ՏՂԱՆԵՐԸ

(էջ 164)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանաստեղծական արխիվում (տե՛ս Երվանդ լալայանի ֆոնդ, գործ I, Մ 864): Գրի է առել Երվանդ լալայանը, 1911 թվ. ապրիլի 11-ին, Կաղզվանում: Ձեռագրի վերևում գրքաված է. «Երվանդ լալայանի խմբարշավ: Էջատակին՝ պատմեց Արրահամ Ավետիսյանը, 70-ամյա, անգրագետ, կույր ծերունին, Ալեքսանդրապոլի՝ Կաղզվանում, 1911 թ. ապրիլի 1-ին: Ասացողի և գրառման հանգամանքների մասին ուրիշ տեղեկություն չկա:

Հեքիաթը անվերնագիր էր, ելնելով բովանդակությունից մենք ենք գրել վերնագիրը:

Այս հեքիաթը սյուժետային գծերով առնչվում է սույն հատորի «Թանշպարի տղեն» (Մ 10) հեքիաթի հետ:

Այստեղ էլ, ինչպես Մ 10 հեթաթում, պատմվում է թագավորին համոզելու
երեք հայտնի պատմություններ՝ հավատարիմ շան, թուփակի, գլխի, որոնք թագավո-
րին ազատում են վերահաս վտանգից, և թագավորը շիմանալով, չքննելով՝ սպանում
է, հետո ափսոսում:

16. ՆԱԽՇՈՒՆ ՂՇԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 173)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանա-
հյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդյանի ֆոնդ, գործ 3, Մ 13): Գրառման
հանգամանքների մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդվում:

Այս հեթաթը սյուժետային գծերով մասամբ առնչվում է նույն ժողովածուի մեջ
գետնղված «Ղըռ-աթ» (Մ 3) հեթաթին: Նշված երկու հեթաթները միանգամայն
տարբեր են, միայն թույլումների թագավորին բռնելու պատմությունն է հիշեցնում
միմյանց:

17. ԳԵԼ, ԱՂՎԵՍ ՈՒ ԱՐՄԻՎ

(էջ 177)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանա-
հյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, Մ 859): Ձեռագրի
վրա գրված է. «Երվանդ Լալայանի խմբարշավ: Էջատակում՝ «Պատմեց 1915 թվ.
նոյեմբերի 9-ին, Ալեքսանդրապոլում Սարգիս Միքայելյանը, գրի առավ Երվանդ
Լալայանը»:

Ասացողի՝ Միքայելյանի մասին կենսագրական տեղեկություններ տե՛ս Մ 3
(«Ղըռ-աթ») հեթաթի ծանոթագրության մեջ:

18. ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՃԳՆԱՎՈՐԸ

(էջ 181)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանա-
հյուսական արխիվում (տե՛ս Վարդ Բղոյանի ֆոնդ, «Ֆոնդիորը Ախուրյանի շրջա-
նում», 1946 թ., էջ 72—74):

Գրի է առել Վարդ Բղոյանը: Ասել է Գարեգին Հարությունյանը:

Բանահավաքը կենսագրությունների բաժնում Գարեգին Հարությունյանի մա-
սին բերում է որոշ տեղեկություններ, նա գրում է. «Գարեգին Հարությունյանը ծնե-
վել է Ղարսի Գյաղիկ-Սաթլիճ գյուղում 1911 թ. 1918 թ. գաղթին նա կորցրել է
ծնողներին, և ինքը ընկել է Ամերիկոմի որբանոցը: Այստեղ նա մնացել է մինչև
1926 թ., որտեղից դուրս է եկել նույն թվականին և բնակություն հաստատել Ղա-
րիբջանյան (նախկին Ռըսի Ղարաթիլիսա) գյուղում: Նա այժմ գյուղխորհրդի նա-
խագահ է Ղարիբջանյանում: Գարեգինից գրի առա՝ «Թագավորն ու ճգնավորը»:

19. ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՏԵՐՏԵՐԸ

(էջ 184)

Տպագրվում է առաջին անգամ: Ձեռագիրը գտնվում է Բանահյուսական արխի-
վում (տե՛ս Վարդ Բղոյանի ֆոնդ, «Ֆոնդիորը Աշտարակի շրջանում», գործ 1, 1945
թ., էջ 41—42):

Գրի է առել Վարդ Բղոյանը 1945 թ. առել է Արտավազդ Իգիթյանը: Ասացողի մասին կենսագրական տեղեկություններ չի հիշատակվում:

20. ԶՐԱԽԱՌ ԿԱԹՐ

(էջ 186)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանասիրական արխիվում (տե՛ս Համբարձում Տեր-Վարդանյանի ֆոնդ, 68, խ 4):

Գրի է առել մահմուդադարյան Համբարձում Տեր-Վարդանյանը, 17/2—1940 թ., Երևանում:

Գրառման հանգամանքների ու ասացողի կենսագրության մասին առանձին հիշատակություններ չունի: Տողատակին գրում է. «Լսել եմ Ալեքսանդրապոլցի Արսեն Տեր-Պողոսյանից»:

Այս հեքիաթի այլ տարբերակը՝ Սուլեյմանի ոսկիները գրական մշակման և ենթարկել Ստեփան Զորյանը «Հեքիաթներ», Երևան, 1957, էջ 3):

21. ՔՅՈՍԵՆ ՈՒ ՂԱՍՊԸՆԵՐԸ

(էջ 189)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանասիրական արխիվում (տե՛ս Նիկողոս Նիկողոսյանի ֆոնդ, «Արձակ պատմվածքներ» բրդրորդ մաս):

Գրառման հանգամանքների մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդվում:

22. ՀԱՍԱՆ ԽԱՆԻ ԳԵՐԻՆ

(էջ 192)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանասիրական արխիվում (տե՛ս Համբարձում Տեր-Վարդանյանի ֆոնդ, 68, խ 3):

Ձեռագրի վրա գրված է. «13-ն ապրիլի 1940 թ., Երևան, գրի առավ Շիրակի Մահմուդադարյանի Համբարձում Տեր-Վարդանյանը: Պատմել է Մահմուդադարյանի Ավելի Մելիքը 1895—96 թվերին»:

Այլ մանրամասնություններ չի հիշատակվում:

Սույն հեքիաթը ավելի չուտ իրապատում գրույց է՝ խրատա-բարոյախոսական բովանդակությամբ, բայց ժանրային տեսանկյունից գերակշռում է կենցաղային հեքիաթի տարրերը:

Բ Ա Ս Ե Ն

23. ՄԻՐՋԱ ՄԱՀՄՈՒՏԻ ՀԵՔԻԱԹՐ

(էջ 195)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանասիրական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, «Երվանդ Լալայանի խմբարչավ» հավելված VII, խ 909):

Գրի է առել բանահավաք Ա. Թովմասյանը, 1911 թ. ապրիլ ամսին (ամսաթիվը չի երևում, թերթի այդ մասը պատռված է): Ձեռագիրը ներկայացնում է մի ընդհանուր տեսար, որի վրա գրված է. «Ժողովածու, Բասենի Երասխաձորի խար գյուղի

բարբառ, գրի առավ Ա. Թովմասյան, գրառման այլ մանրամասնություններ չի հիշատակվում:

Այս հեքիաթը առնչվում է սույն հատորում տեղավորված «Հարբանի» (Մ 7) հեքիաթի հետ: Այստեղ ևս նույն սյուժեն է, նույն բովանդակությունը և գրեթե սյուժետային գծերի նույնանման զարգացումը:

24. ՀՅՈՒՄՄԵՆԻ ԽՍՐԱԽ

(Էջ 220)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանաստեղծական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, Մ 839): Գրի է առնել Երվանդ Պեղազյանը: Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ Նարման-էքրեկ: Էջատակին բանահավաքը գրում է. «Պատմեց 1915 թվի նոյեմբերի 9-ին Ալեքսանդրապոլում Նարման-էքրեկ գյուղի բնակիչներից Հակոբ Սանոյան անունով, անգրագետ, վաթսուհինգամյա ծերունին»:

Ձեռագրի վրա գրված է «Երվանդ Լալայանի խմբարշտվա կնիքը»:

25. ԶԱՆԳԻ

(Էջ 227)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանաստեղծական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, Մ 812): Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշտվա կնիքը»: Գրի է առնել Արտաշես Բարսեղյանը, որը ունի հետևյալ ծանոթությունը. «Պատմեց Արամ Վարդերեսյան, 20 տարեկան, Բասենի Հարսենքար գյուղացի, արհեստով երկրագործ: Հեքիաթը սովորել է նույն գյուղացի մի ծերից»:

26. ՀՈՐԹԱՐԱՄԻ ՀԵՔԻԱԹ

(Էջ 235)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանաստեղծական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, հավելված 1, Մ 909): Ձեռագրի վրա գրված է. «Ժողովածուի բանահյուսական նյութերի, Բասեն, Երասխանոթի հար գյուղ, գրի առավ Ա. Թովմասյան, 1911 թ. ապրիլ» (ամսաթիվը չի երևում, թերթի այդ մասը պատռված է): Գրառման հանդամանքների մասին մի այլ հաղորդում չկա (տե՛ս Ճ 23 հեքիաթի ծանոթաթյուրները):

27. ՔԱԶԼԻԿԻ ՀԵՔԻԱԹ

(Էջ 244)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանաստեղծական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, հավելված 11, Մ 909): Ձեռագիրը ներկայացնում է մի ընդհանուր տեքստ, որի վրա գրված է՝ «Ժողովածու, Բասեն, Երասխանոթի հար գյուղ, գրի առավ Ա. Թովմասյան, 1911 թ. ապրիլ» (ամսաթիվը չի երևում, թերթի այդ մասը պատռված է): Այլ տեղեկություններ չի հաղորդվում (տե՛ս Մ 23 և 26 հեքիաթների ծանոթագրությունները):

28. ԲԵՆԹԱԴԻ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԵՔԻԱԹՇ

(էջ 257)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, Պ 842): Ձեռագրի վրա գրված է «Ե». Լալայանի խմբարչավձ կնիքը: Նրանից մեկ տող ներքև, փակագծում գրված է՝ Նարման-էքրեկ: Գրի է առել Երվանդ Պեղազյանը: Բանահավաքը տողատակին գրում է. «Պատմեց 1915 թ. նոյեմբերի 11-ին Ալեքսանդրապոլում Նարման-էքրեկ գյուղի բնակիչներից Հակոբ Սանոսյան անունով, անգրագետ, վաթսունհինգամյա ծերունին, որ իր երկրում զբաղվել է հողագործությամբ»: Գրառման այլ մանրամասնություններ չկան:

29. ԱՎՃԻ ԱՀՄԱՏԻ ՀԵՔԻԱԹ

(էջ 271)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, հավելված IV, Պ 909): Ձեռագիրը ներկայացնում է մի ընդհանուր տետր, որի վրա գրված է «Ժողովածու, Ժասեն, Երասխաձորի հար գյուղ, գրի առավ Ա. Թովմասյան, 1911 թ. ապրիլ»: Գրառման հանգամանքների մասին ոչ մի այլ տեղեկություն չի հաղորդվում (տե՛ս Պ Պ 23, 26, 27 հեքիաթների ծանոթագրությունները):

30. ԿՆԿԱՆ ՍԸՌ ԶԸՍԵՍ

(էջ 278)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, Պ 838): Ձեռագրի վրա գրված է «Երվանդ Լալայանի խմբարչավձ կնիքը: Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ Նարման-էքրեկ: Գրի է առել Երվանդ Պեղազյանը: Բանահավաքը Լիտտակին ունի հետևյալ ծանոթությունը. «Պատմեց 1915 թվի նոյեմբերի 10-ին, Ալեքսանդրապոլում, Նարմանի-էքրեկ գյուղի բնակիչներից Հակոբ Սանոսյան անունով, անգրագետ, վաթսունհինգամյա ծերունին, որ իր երկրում պարապել է հողագործությամբ»:

Այս հեքիաթի երկրորդ մասը հիշեցնում է սույն հատորի, «ԱվՃի Ահմատի հեքիաթը» (Պ 29):

31. ԱԽՁԻԿՆ ՈՒ ՀԱՐԱՄԲԱՇԻՆ

(էջ 282)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, Պ 810): Ձեռագրի վրա գրված է «Ե». Լալայանի խմբարչավձ կնիքը: Գրի է առել Բանահավաք Երվանդ Պեղազյանը. նա թողել է հետևյալ ծանոթությունը. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 5-ին Շինոզ գյուղում, Բասենի հոսսովերանց զեղչկուհի Հեղինար Զախալչյան, անգրագետ, հիսուներեքամյա պառավը: Գրառման վերբերյալ այլ մանրամասնություններ չի հաղորդվում»:

32. ԳՅՈՒԼԻԶԱՐ

(էջ 200)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ I, Պ 814): Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարչավ» կնիքը:

Գրի է առել Երվանդ Պեղազյանը: Ձեռագրի էջատակին բանահավաքը դրել է ծանոթություն. «Ասել է 1915 թ. հոկտեմբերի 5-ին Շինող գյուղում, Բասենի Խոսրովերանց գյուղի զեղչկուհի Հեղինար Զախալյանը, անգրագետ, հիսունամյա պառավը» (տե՛ս Պ 31 հեքիաթի ծանոթագրությունը): Գրառման մասին այլ մանրամասնություններ չի հաղորդվում:

Այս հեքիաթը առնչվում է սույն հատորի «Ղուլ-Ջազա և Նուռի գյուղալի» (Պ 13) հեքիաթի հետ:

33. ՔՅԱԼ ՕՂԼԱՆ

(էջ 302)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ I, Պ 807): Ձեռագրի վրա գրված է «Երվանդ Լալայանի խմբարչավ» կնիքը: Գրի է առել Արտաշես Բարսեղյանը: Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Պատմեց Վարդերես Սերոբյան, 52 տարեկան, անգրագետ, երկրագործ ծերունին, Բասենի Հարսենքար գյուղացի»: Գրառման մասին այլ տեղեկություններ չի հաղորդվում:

Այս հեքիաթը առնչվում է սույն հատորում զետեղված «Մաշրում խոշի հեքիաթի» (Պ 8) առաջին մասին: Այնտեղ էլ թագավորը տղա չի ունենում, դերվեշը գալիս խնձոր է տալիս՝ պայմանով, որ տղաներից մեկը իրեն տա: Հեքիաթի զարգացման հետագա ընթացքը առնչվում է «Հաբրմանի» (Պ 1) և «Միբա Մահմուտի» (Պ 23) հեքիաթների հետ: Ինչպես այս հեքիաթում, վերոթվյալ երկու հեքիաթներում էլ հերոսը կախարդական մագի և չիրուփի միջոցով ստանալով «Ղըռ» ու «Տոռ» ձիերը, պատրաստ գալիս է, չիրիդում աչքի ընկնում, ընդ որում դեպքերի նույն զարգացումն է՝ թագավորի փոքր աղջիկը զիտե, որ իր ամուսինն է, իսկ քույրերը լզիտեն:

34. ԴՅՈՒՆՅԱ ԳՅՈՋԱԼԻ

(էջ 310)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ I, Պ 815): Ձեռագրի վրա գրված է «Երվանդ Լալայանի խմբարչավ» կնիքը:

Գրի է առել Արտաշես Բարսեղյանը, բանահավաքը թողել է մի այսպիսի ծանոթություն. «Պատմեց Վարդերես Սերոբյան, հիսուներկու տարեկան, Բասենի Հարսենքար գյուղացի, անգրագետ գյուղացին: Հեքիաթը սովորել է իրենց երկրացի կույր Համբարից, արհեստով երկրագործ է»:

Այս հեքիաթը մասամբ առնչվում է «Քյալ օղլան» (Պ 33) հեքիաթին: Այստեղ էս թագավորի աղջիկը խնձորը նետում է օտարականին. երկու հեքիաթների մեջ էլ թագավորն սկզբում առարկում է, վերջում համաձայնում, որ աղջիկը ամուսանան օտարականի կամ Քյալ օղլանի հետ:

35. ԲԵՐԱԼԽՏ ԸՆԿԵՐՏԱՆՔ

(Էջ 314)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, դործ I, № 808): Զեռագրի վրա դրված է Երվանդ Լալայանի խմբարչավձ կնիքը: Գրի է առել Երվանդ Պեղաղյանը, նա թողել է հետևյալ ծանոթությունը. «Պատմեց 1915 թ. հոկտ. 6-ին Շինող դյուղում Բասենի հոսքովերանց դյուղի ղեղը կուհի Հեղինար Զախալյան, անհրաղետ, հիսունամյա պառավը» (տե՛ս Ն՝ № 31, 32 հեքիաթների ծանոթագրությունները): Գրառման այլ մանրամասնություններ չի հիշատակված:

36. ՍԻՄՈՆ ԿՈՒՊԵՑԻՆ ՀԵՔԻԱԹԸ

(Էջ 319)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, դործ I, հավելված III, № 909): Զեռագիրը ներկայացնում է րանահյուսական նյութերի ընդհանուր մի ժողովածու, դրի է առել Ա. Թովմասյանը 1911 թ. ապրիլ ամսին (ամսաթիվը չի երևում, թերթի այդ մասը պատռված է) Երասխաձորի հար դյուղում (տե՛ս № № 23, 26, 27, 29 հեքիաթների ծանոթագրությունները):

Գրառման հանգամանքների մասին րանահավաքը սլ մի տեղեկություն չի հաղորդում:

Այս հեքիաթը մասամբ առնչվում է սույն հատորի «Սինամ» (№ 37) հեքիաթի հետ: Ինչպես այստեղ, այնտեղ ևս կենտրոնական հանգույցը հավատարիմ ա համեստ աղչկան ամրաստանելու պատմությունն է:

37. ՍԻՆԱՄ

(Էջ 330)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, դործ I, № 811): Զեռագրի վրա դրված է Երվանդ Լալայանի խմբարչավձ կնիքը: Գրի է առել Երվանդ Պեղաղյանը: Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Պատմեց 1915 թ. հոկտ. 3-ին Շինող դյուղում, Բասենի հոսքովերանց ղեղը կուհի Հեղինար Զախալյան, անգրագետ, հիսունամյա պառավը» (տե՛ս № № 31, 32, 35 հեքիաթների ծանոթագրությունները): Գրառման վերաբերյալ այլ մանրամասնություններ չի հաղորդում:

Այս հեքիաթը առնչվում է սույն հատորի «Սինոն Կուպեցին հեքիաթի» հետ (տե՛ս № 36 ծանոթագրությունը): Առնչվում է նաև ներկա հրատարակության աղաչին հատորում ղետեղված՝ «Մուկսու հեքիաթին» (№ 14):

38. ԹՈՒՐԲՄԱՆ ՕՂԼՈՒ ՀԵՔԻԱԹ

(Էջ 336)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, դործ I, հավելված V, № 909):

Գրի է առել Ա. Թովմասյանը: Ձեռագիրը ներկայացնում է ընդհանուր տետր, որի առաջին էջում գրված է. «Ժողովածու, Բասեն, Երասխաձորի հար գյուղ, գրի առավ 1911 թ. ապրիլ (ամսաթիվ չի երևում, թերթի այդ մասը պատռված է), Ա. Թովմասյան»: Գրառման մանրամասնությունները չի հիշատակվում (տե՛ս Մ Մ 23, 26, 27, 28, 36 հեքիաթների ծանոթագրությունները):

39. ԱՔԱՐ ԹԱԳԱՎՈՐ

(էջ 347)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, Մ 843): Ձեռագրի վրա գրված է. «Ծ. Լալայանի խմբարչավ» կնիքը: Գրի է առել Երվանդ Պեղազյանը: Բանահավաքը էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվի նոյեմբերի 10-ին, Ալեքսանդրապոլում նարմանի-էքրեկ գյուղի բնակիչներից Հակոբ Սանոսյան անունով անգրագետ վաթսունհինգամյա ծերունին»:

40. ԵՐԿՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆ

(էջ 350)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, հավելված VII, Մ 909): Ձեռագիրը ներկայացնում է ընդհանուր մի տետր, որի առաջին էջի վրա գրված է. «Ժողովածու բանահյուսական նյութերի, Բասեն, Երասխաձորի հար գյուղ, գրի առավ 1911 թ. ապրիլ (ամսաթիվը չի երևում, թերթի այդ մասը պատռված է) Ա. Թովմասյան»: Բանահավաքը ոչ մի տեղեկություն չի հաղորդում ասացողի և գրառման այլ հանգամանքների մասին (տե՛ս Մ Մ 23, 26, 27, 28, 36 և 38 ծանոթագրությունները):

Այս հեքիաթը հիշեցնում է սույն հատորի «Հավելված» բաժնում գետնիված «Էրզրումում մարգ լեղավ, Ստամբուլում աղա էղավ» (Մ 9) հեքիաթը:

41. ՀԱԼՎԱՃԻ ԳՅՈՒՋԵԼ

(էջ 350)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, Մ 819): Ձեռագրի վրա գրված է «Ծ. Լալայանի խմբարչավ» կնիքը: Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը: Բանահավաքը թողել է ծանոթություն, ուր գրված է. «Պատմեց Շինոդի մեջ 1915 թ. հոկտ. 6, Գալուստ Ավետիսյան, Բասենի հոսարովերանց գյուղից, անգրագետ, վաթսուն տարեկան ծերունին: Պանդխտություն է գնացել Արտվին, Օլթի, Արդահան: Իր գյուղի մեջ պարապել է որմնադրությամբ»:

42. ԷՇՂԻԱ

(էջ 363)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, Մ 818):

Ձեռագրի վրա գրված է «Երվանդ Լալայանի խմբարչավ» կնիքը: Գրի է առել

Սենեքերիմ Շալճյանը, էջատակին բանահավաքը գրում է. «Պատմեց Հակոբ Ղազարոսյան (Բասենի Հարսենքար գյուղ)։ Այլ տեղեկություններ չի հաղորդում»։

43. ՔԱՎՈՐՆ ՈՒ ՍԱՆԵՐԸ

(Էջ 367)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ I, № 820)։ Ձեռագրի վրա գրված է «Երվանդ Լալայանի խմբարշավ» կնիքը։

Գրի է առել 1915 թ. հոկտ. 9-ին Աթորիում Մ. Դարադյանը, որը էջատակի ծանոթություն մեջ բերում է. «Պատմեց Պողոս Գալուստյան, Բասենի Իշխվա դուզեն, հիսուն տարեկան, կարգալ-գրել չգիտեր։ Հոգագործ էր։ Այս է բանահավաքի բերած տեղեկությունները, գրառման հանգամանքների մասին այլ հիշատակություն չկա»։

44. ԶԻՆԻ-ՄԱԶԻՆԻ ՀԵՔԻԱԹ

(Էջ 371)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ I, № 841)։ Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ, առաջին էջում գրված է. «Պատմեց 1915 թվի նոյեմբերի 9-ին, Ալեքսանդրապոլում Նարմանի-էքրեկ գյուղի բնակիչներից Հակոբ Սանոսյան անունով անգրագետ, վաթսուհինգամյա ծերունին։ Գրի առավ Երվանդ Պեղադյան»։

45. ԱՍՏԾՈՒ ԳՐԱԾԸ ԲՈԶՈՒԼՄԻՇ ԶԷՂՆԻ

(Էջ 374)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ I, № 821)։ Ձեռագրի վրա գրված է «Երվանդ Լալայանի խմբարշավ» կնիքը։ Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը։ Բանահավաքը ունի հետևյալ ծանոթությունը. «Պատմեց Շինոդում 1915 թ. հոկտ. 6-ին, Խաչո Վարդանյան, վաթսուն տարեկան, Բասենի Հարսենքար գյուղից, անդրադետ ծերունին։ Վերջի 1914-ի դաղթեն առաջ եկած է Ալեքսանդրապոլ, Կարս և էջմիածին։ Իր գյուղի մեջ գրաված է երկրագործությամբ»։

Այս հեքիաթը առնչվում է ներկա հրատարակության երկրորդ հատորում զետեղված՝ «Մարդիս ճակատի գրածը չի շնչվի» (№ 24) հեքիաթին։

46. ԽԵՂԹՈՒԿ ԱԽԶԻԿ

(Էջ 378)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ I, № 817)։ Ձեռագրի վրա գրված է «Երվանդ Լալայանի խմբարշավ» կնիքը։ Գրի է առել Երվանդ Պեղադյանը։

Բանահավաքը ունի հետևյալ ծանոթությունը. «Պատմեց 1915 թ. հոկտ. 6-ին

Շինող գյուղում Բասենի խոսրովերանց գյուղի գեղջկուհի Հեղինար Զախալյան անգրագետ, հիսունամյա պառավը (տե՛ս սույն հատորի Մ Մ 31, 32, 35, 37 հեքիաթների ծանոթագրությունները)։

47. ԽԱՐԵՑԻ ԱԹԱՔԵԿ

(էջ 382)

Տպագրվում է առաջին անգամ, Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, հավելված V111, 909)։ Զեռագիրը ներկայացնում է մի ընդհանուր տեքստ, որի վրա դրված է «Ժողովածու քահանայական նյութերի, Բասեն, Երասխաձորի խար գյուղ, գրի առավ Ա. Թովմասյան, 1911 թ. ապրիլ» (տե՛ս սույն ժողովածուի ՄՄ 23, 26, 27, 28, 36, 38, 40 հեքիաթների ծանոթագրությունները)։

48. ԳԵՂԻ ՔԵՀԵՆ

(էջ 389)

Տպագրվում է առաջին անգամ, Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, Մ 840)։ Զեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է՝ Նարման-էքրեկ։

Գրի է առել Եվանդ Պեղաղյանը, Բանահավաքը էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվի նոյեմբերի 10-ին Ալեքսանդրապոլում, Նարման-էքրեկ գյուղի բնակիչներից Հակոբ Սանոսյան անունով, անգրագետ, վաթսուհինգամյա ծերունին»։

49. ԿՆԿԱ ԼԱՎՈՒԹԵՆԸ ԷՐԿԵՆ Է

(էջ 392)

Տպագրվում է առաջին անգամ, Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, Մ 813)։ Զեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Գրի է առել Արտաշես Բարսեղյանը, Պատմել է Բասենի Հարսենքար գյուղացի մի պառավ, Գրառման հանգամանքների մասին այլ հիշատակություն չկա։

Զ Ա Վ Ա Խ Բ

50. ԱՆԹՈՒՈՒ ԱՇԽԱՐՔ ԷՐԹՅՈՂ ՏՂԱՆ

(էջ 394)

Տպագրվում է ըստ Երվանդ Լալայանի «Պառավաշունչ» (էջ 5—11) գրքույկում հրատարակված տեքստի։ Հեքիաթի գրառման հանգամանքների մասին ծանոթություն չկա։ Հեքիաթը գրի է առել Երվանդ Լալայանը։

Այս հեքիաթը սյուժետային գծերով հիշեցնում է ներկա հրատարակության առաջին հատորում զետեղված «Իր հարսին աչք գնող Թաղավորը» (Մ 39) հեքիաթը։

51. ԾՈՎՈՒ ԱՂՋԻԿԸ

(էջ 399)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, դործ 1, Ձ 899): Զեռաշրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը: Զեռագրի առաջին էջի վրա գրված է. «Էրզրումի բարբառով, հավաքեց Արտաշես Բարսեղյանը 1915 թ. 8/12—Երևան»: Գրառման հանգամանքների մասին ոչ մի այլ տեղեկություն չի հաղորդում բանահավաքը:

52. ՊՅՈՒԼՊՅՈՒԼԻՆ ՀԵՔՒԱԹԸ

(էջ 404)

Տպագրվում է ըստ Երվանդ Լալայանի «Պառավաշունչ» գրքույկում (էջ 22—27) հրատարակված տեքստի:

Գրի է առել Երվանդ Լալայանը: Գրառման վերաբերյալ այլ տեղեկություններ չկան (տե՛ս Ձ 50 հեքիաթի ծանոթագրությունը):

53. ՄԻՍՈ

(էջ 408)

Տպագրվում է ըստ «Ազգագրական հանդես»-ում (19-րդ գիրք, էջ 158) հրատարակված տեքստի: Գրի է առել Երվանդ Լալայանը: Գրառման հանգամանքների մասին տեղեկություն չկա: Այս հեքիաթը իր սյուժետային գծերով հիշեցնում է սույն հատորի «Մաշրում խոշի հեքիաթը» (Ձ 8) և «Դամբուհ հեքիաթը» (Ձ 9) հեքիաթները: Իսկ առանձին էպիզոդներով (ինչպես օրինակ՝ երեք եղբայրների կամ դեռքի վեճը՝ անտեսանելի զխարկը, արագավազ կռիվներն ու խալին իրար միջև բաժանել շկարողանալն ու հեքիաթի հերոսին հանձնարարելը) համընկնում է «Մարգակերպ ձուկը» հեքիաթին (Ձ 4):

54. ՕԽԵԱՎ

(էջ 415)

Տպագրվում է ըստ Երվանդ Լալայանի «Պառավաշունչ» գրքույկում (էջ 16—21) հրատարակված տեքստի:

Գրի է առել Երվանդ Լալայանը: Գրառման մասին առանձին ծանոթություն կամ տեղեկություն չի տալիս:

Այս հեքիաթի նման օրինակը գտնում ենք ներկա հրատարակության երկրորդ հատորում՝ «Օխիսայ բարի» վերնագրով (II հ., էջ 199): Այս հատորում եղած «Օխիսայը» և II հատորի՝ «Օխիսայ բարին» լինելով միմյանց շատ նման, սակայն ունեն սյուժետային զարգացման տարբերություններ: «Օխիսայ»-ը հիշեցնում է «Օխիսայ բարի»-ի առաջին և վերջին մասերը, իսկ II հատորում եղած հեքիաթի միջին, էպիզոդիկ մասը հիշեցնում է ներկա հատորի «Կախարդ արապը» (5) հեքիաթը:

55. ԿԱՆԱՐԴ ԱՐԱՊԸ

(էջ 419)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ I, Մ 897): Ձեռագրի վրած գրված է Երվանդ Լալայանի խմբարշտվա կնիքը: Գրված է. «էրզրումի բարոբառով, հավաքեց Բարսեղյան 1915 թ. դեկա. 8, Երևան: Պետք է ենթադրել, որ Բարսեղյանը մեզ ծանոթ բանահավաք Արտաշես Բարսեղյանն է, քանի որ ձեռագիրը նույնն է:

Այս հեքիաթը իր բովանդակությամբ և սյուժետային գծերով համընկնում է սույն հատորի հավելվածում եղած «Զար կնիկը» (X՝ 4) հեքիաթին: Հիշեցնում է նաև ներկա հրատարակության երկրորդ հատորում զետեղված՝ «Օխիսայ բարի» հեքիաթի միջին մասին:

56. ԵՐԿՈՒ ԱՆՊԱՐ

(էջ 423)

Տպագրվում է ըստ Երվանդ Լալայանի «Պատմությունը» (էջ 12—15) գրքույկում հրատարակված տեքստի: Գրի է առել Երվանդ Լալայանը: Գրառման մասին մանրամասնություններ չի հաղորդում:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ I

1. ԺՈՒՇԿԻՆ ԳՆՆԵՐԱԼ

(էջ 429)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Վարդ Բղոյանի ֆոնդ, գործուղում լորրորդ-հինգերորդ, 1946 թ., էջ 32—36):

Հեքիաթը 1946 թ. գրի է առել Վարդ Բղոյանը. ասել է Թևան Հակոբյանը: Ձեռագիր տետրի վերջում բանահավաքը ասացողների մասին տալիս է ուշագրավ տեղեկություններ, նա գրում է. «Թևան Հակոբյանը ծնվել է 1876-ին, Ղարսի Բալաքյադիկլար գյուղում: Նա շարունակ ղրաղվել է հողագործությամբ: Մինչև 1918-ը եղել է հայրենի գյուղում, որից հետո ընտանիքով գաղթել է նախ՝ Լենինական, ապա 1922-ին տեղափոխվել է Ախուրիկ (նախկին Թուրքի Ղարաքիլիսա): Այստեղ նա այժմ աշխատում է կոլտնտեսում: Թևանը կիսագրագետ, առակախոս մարդ է: Գիտի նաև հեքիաթներ ու զավեշտական երգեր, որ ասում և պատմում է մայրենի բարբառով: Նրանից գրի առա՝ «Մանր հարկերը», «Մահ լուզող տղան», «Ախ մեր տան քաշն քաշեն»-ը, «Ժուլկին զենեռայ»-ը, «Գյուղերի դաստանը», «Ղարսա դաստանը», «Թուրքունի դաստանը» և «Մշեցու դաստանը»: Բելադրելիս նրան օգնում էր իր փոքր եղբայրը՝ Տիգրան Հակոբյանը:

Այս հեքիաթը մասամբ առնչվում է ժողովածուի մեջ զետեղված «Մաշրում խոջի հեքիաթ»-ի (Մ 8) հետ:

2. ՄԱՀ ՉՈՒՋՈՂ ՏՂԱՆ

(էջ 434)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Վարդ Բդոյանի ֆոնդ, «Ֆուկլորը Ախուրյանի շրջանում», դործուղում շտրոբոդ-հինդերորդ, 1946 թ., էջ 36—42): Գրի է առել Վաղ Բդոյանը Ախուրյանի շրջանում, 1946 թվ.: Ասել է Թևան Հակոբյանը: Ասացողի մասին կենսագրական տեղեկություններ տե՛ս նախորդ (Ձ 1) հեքիաթի ծանոթագրության մեջ:

3. ԾԱՆՐ ՀԱՐԿԵՐ

(էջ 441)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Գրականության և արվեստի թանգարանում (տե՛ս Վարդ Բդոյանի ֆոնդ, ֆուկլորը Ախուրյանի շրջանում, դործուղում շտրոբոդ-հինդերորդ, 1946 թ., էջ 60—61):

Գրի է առել Վարդ Բդոյանը 1946 թ., ասել է Թևան Հակոբյանը: Ասացողի մասին կենսագրական տեղեկություններ տե՛ս նույն ժողովածուի Ձ 14 (Ժուլկին գեներալ) ծանոթագրության մեջ:

4. ՉԱՐ ԿՆԻԿԸ

(էջ 443)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Վարդ Բդոյանի ֆոնդ, «Ֆուկլորը Աղինի շրջանում», դործուղում շ-րգ, 1945 թ., էջ 26—27):

Գրի է առել Վարդ Բդոյանը, ասել է Մարալիկցի Գևորգ Ապիկյանը:

Գրառման հանգամանքների մասին այլ տեղեկություններ չի հաղորդում րահավաքը:

Այս հեքիաթը առնչվում է սույն հատորում զետեղված «Կախարդ արապը» հեքիաթին (Ձ 55):

5. ՍՄՐԱՏՆ ՈՒ ՍՀԱԿ

(էջ 445)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, դործ I, հավելված IX, №909): Ձեռագիրը ներկայացնում է մի ընդհանուր տեքստ, որի առաջին էջի վրա գրված է «Ժողովածու, ժողովրդական բանահյուսության նյութերի, Բասեն նրասխաձորի հար գյուղ, գրի առավ Ա. Թովմասյան, 1911 թ. ապրիլ»: Գրառման հանգամանքների մասին ոչ մի այլ տեղեկություն չի հաղորդվում: (Տե՛ս սույն հատորի Ձ Ձ 23, 26, 27, 28, 29, 36, 38, 40, 42 հեքիաթների ծանոթագրությունները):

6. ՕՂՈՐՄԱՅՈՂ

(էջ 455)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, դործ I, Ձ 816): Ձեռագրի

վրա դրված է «Երվանդ Լալայանի խմբարչավձ կնիքը: Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը: Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Պատմեց Շինողում հայո Վարդանյան, վաթսուն տարեկան, Բասենի Հարսենքար գյուղից, անգրագետ ծերունին: Քանիմ տարի առաջ Ալեքսանդրապոլ, Կարս և էջմիածին ճամբորդած է: Իր գյուղի մեջ երկրագործությամբ զբաղված է: Սույն հեքիաթը սովորած է Աղեքսանդրապոլիցի Օճաղ-Կուլի գյուղացի՝ բերտենց Սաֆարենա:

7. ՔՅԱԼ ՄԱՆՁԸ

(Էջ 460)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ I, Ն՝ 809): Ձեռագրի վրա դրված է «Երվանդ Լալայանի խմբարչավձ կնիքը: Գրի է առել Արտաշես Բարսեղյանը: Նա էջատակին գրում է. «Պատմեց Պողոս Գալուստյան Իշխու գյուղացի (Բասենում)՝ հիսուն տարեկան անգրագետ գյուղացին: Հեքիաթը սովորել է գեղի պապերից:

Գրառման վերաբերյալ այլ մանրամասնություններ չի հաղորդվում:

8. ՀԵՔԻԱԹԻ ԴՅՈՋԱՄԵՆ

(Էջ 463)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ):

9. ԷՐՋՐՈՒՄՈՒՄ ՄԱՐԴ ԶԷՂԱՎ, ՍՏԱՄԲՈԼՈՒՄ ԱՂԱ ԷՂԱՎ

(Էջ 465)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ I, Ն՝ 898): Ձեռագրի վրա դրված է «Երվանդ Լալայանի խմբարչավձ կնիքը: Վերնագիր լուսնի: Ձեռագրի առաջին էջում վերնագրի փոխարեն գրված է «Հեքիաթ», այնուհետև նույն էջում հեքիաթի կողքին գրված է. «Էրզրումի բարբառով»: Գրառման հանգամանքների՝ ասացողի, գրի առնողի, ժամանակի և այլնի մասին տեղեկություններ չկան:

Ելնելով բովանդակությունից, վերնագիրը մենք ենք դրել: Այս հեքիաթը առնչվում է սույն հատորի «Երկու վաճառական» (Ն՝ 40) հեքիաթին:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ II

(Էջ 476)

Հավելված երկրորդում դրված են նմուշներ Շիրակի, Բասենի և Զավաթքի խոսվածքներից գիտական տառադարձությամբ, որը կատարել է Հակոբ Մկրտչյանը:

